# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԹԱԳՀԷՄ ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Բարձր պարունակությամբ տեսապատկերավորման համակարգ | Բարձր պարունակությամբ տեսապատկերավորման համակարգ | Celena X | Aligned Genetics | Շարժական շրջված մանրադիտակ, որը պատրաստված է մոնոբլոկի տեսքով՝ ամբողջական կառավարման միավորով: Տեսապատկերավորման համակարգը կարող է պատկերել նմուշներ զետղված առարկայական ապակու, բազմափոսիկավոր (6-1536 փոսիկներ) պլանշետների, Պետրի թասիկների վրա և կուլտուրաների տափաշշերի մեջ: Համակարգը պետք է ունենա 4–ալիքային ֆլյուորեսցենտ, լույսային դաշտի, ֆազակոնտրաստային և գունավոր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լուսային դաշտի պատկերավորման ռեժիմներ, բարձր հզորությամբ LED ֆիլտրերի խորանարդներ՝ կարգարվորվող ինտենսիվությամբ (»50,000 ժամ յուրաքանչյուր ֆիլտրի խորանարդում), Ֆիլտրի խորանարդի հարթակը շարժական՝ կազմված 4 իարար փոխարինող ֆյուորեսցենտ ֆիլտրերի խորանարդներից և 1 լուսային ֆիլտրի խորանարդից։ Այն ունենալու է DAPI(Ex395/25, Em460/50), EGFP(Ex470/30, Em530/50), RFP(Ex530/40, Em605/55), Cy5(Ex620/60, Em700/75) ֆլյուորեսցենտային ֆիլտրեր, հնարավորություն համալրելու Cy7 (Ex710/60 Em810/90) ֆյուորեսցենտ ֆիլտրերի խորանարդով։ Համակարգի օբյեկտիվների պտուտակահաստոցը շարժական է, 5 իրար փոխարինող օբյեկտիվներով; օբյեկտիվները կիսա-ապոքրոմատ՝ 4X, 10X, 20X, 40X խոշորացմամբ, ցանկալի է տեղադրված լինեն Olympus ընկերության օբյեկտիվներ, սակայն համատեղելի լինի նույն դասի այլ օբյեկտիվների հետ։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Հնարավորություն ունենա համալրվելու 60X կամ 100X սուպեր ապոքրոմատ յուղային օբյեկտիվներով: Կոնդենսատորը շարժական , ֆազակոնտաստային՝ 60մմ LWD, 4դիրքով 3 ֆազային օղակով: Ներկառուցված տեսախցիկը կրկնակի մոդուլով գունավոր/մոնոքրոմ, երկկու մոդուլը պետք է ունենա CMOS կամ անալոգ մատրիացա, ռեզոլյուցիան 1.92 MP-ից ոչ պակաս, նկարների ֆորմատը՝ 24-bit color TIF, PNG, կամ JPG, վիդեոները՝ MP4, Ֆոկուսավորման համակարագը՝ նկարի հիման վրա աուտոֆոկուսավորմամբ: Առարկայական սեղանիկը՝ շարաժական, X/Y հարթակով՝ 120 x 80մմ և Z հարթակով՝ 10մմ, սաքրը պետք է ունենա ունիվերսալ բռնիչ, միկրոպլանշետի բռնիչ, առարկայական ապակու բռնիչ, Պետրի թասիկների բռնիչ՝ 35, 60, 100 մմ տրամագծով, կուլտուրաների տափաշշերի բռնիչ՝ 25սմ2 NuncT-25 և 75 սմ2 NuncT-75-ի համար, ինչպես նաև 25 սմ2 BD/GreinerT-25 և 75 սմ2 BD/GreinerT-75-ի համար, հարթակների կառավարումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ավտոմատ Celena X Explorer կամ անալոգ ծրագրով։ Սարքը պետք է ունենա արտաքին համակարգիչ՝ HP Z240 SFF Workstation կամ անալոգ, ոչ պակաս 27´´ 4K UHD թողատվությամբ մոնիտորով, որտեղ պետք է լինեն Celena X Explorer ծրագիրը կամ անալոգ ծրագիր՝ սարքը աշխատացնելու համար և տվյալների վերլուծության Celena X Cell Analazer ծրագիրը կամ անալոգ ծրագիր: Տեսապատկերավորման ծրագիրը պետք է ապահովի նկարների պատկերում սահմանված ժամանակային ընդմիջումով, ունենա շերտ առ շերտ (Z-stack) պատկերներ ստեղծելու ունակություն, տարբեր հաճախականություններից ստացված պատկերների համադրության ունակություն՝ մուլտիպլեքսային պատկեր ստեղծելու համար, տվյալների վերլուծության ծրագիրը պետք է ապահովի ստացված պատկերի վրա գծային և անկյունային չափումներ, պետք է ունենա պատկերների վերլուծության արձանագրություններ ստեղծելու, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պահպանելու և վերարտադրելու ունակություն, կատարել բջջային պոպուլյացիաների պրոլիֆերացիայի քանակական հաշվարկներ,իրականացնել ցիտոտոքսիկության քանակական հաշվարկներ, ունենա օբյեկտների համատեղ տեղայնացումը որոշելու ունակություն: Երկարատև փորձերի համար սարքը պետք է հնարավոր լինի համալրել ավտոնոմ բլոկով, որը կպահպանի կայուն միջավայրային պայմաններ՝ ջերմաստիճանի, խոնավության, CO2 կամ CO2/O2 կոնցենտրացիայի վերահսկմամբ: Երաշխիքային ժամկետ՝ 1 տարի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ТАГ ГЭМ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |
| | | | | | |